ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> 07 2012թ. N: 192-Ա ք.Գյումրի

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿՈՆԿՐԵՏ ՄԱՍՆԱԿՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 69-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի /տնօրենի/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2012 թվականի հուլիսի 17-ին անցակացված մրցույթի մասնակից Ռուզաննա Ալեքսանյանի բողոքը քննարկող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 20-ի եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի /տնօրենի/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2012 թվականի հուլիսի 17-ին անցակացված մրցույթի արդյունքը մրցույթի մասնակից Ռուզաննա Ալեքսանյանի վերաբերյալ թողնել անփոփոխ:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝